

ՄԱՐԻՆԵ ՄԱՐՈՒԹՅԱՆ
ՍՈՒՄԱՆՆԱ ՍՈՒՐԱԴՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ԱՆԻ ԴԻԼԱՆՅԱՆ
ՄԱԹԵՆԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԶՎԱԿԵՐՅԱՆ

**ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԲԱԶՄԱԿԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

Ուսումնասերոդական ուղեցույց
Ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ
Ասողիկ
2019

ISBN 978-9939-50-436-0



9 789939 504360

ՄԱՐԻՆԵ ՄԱՐՈՒԹՅԱՆ
ՍՈՒՄԱՆՆԱ ՍՈՒՐԱԴՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ԲԱԼԱՍՄԱՆՅԱՆ
ԱՆԻ ԴԻԼԱՆՅԱՆ
ՄԱԹԵՆԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԶՎԱԿԵՐՅԱՆ

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԶՄԱԿԻ
ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնամեթոդական ուղեցույց

Ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ
Ասողիկ
2019

ՀՏԴ 376(07)

ԳՄԴ 74.3g7

S 345

Երաշխավորված է ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի կողմից

ՀԵՂԻՆԱԿ-ԿԱԶՄՈՂՆԵՐ՝

Մ.Կ. Մարության, մ.գ.թ., դոցենտ

Ս.Վ. Մուրադյան, մ.գ.թ., դոցենտ

Գ.Հ. Բալասանյան

Ա.Ա. Դիլանյան

Ս.Է. Եղիազարյան

Հ.Ա. Չվակերյան

ԽՄԲԱԳԻՐ - ԽՈՐՀՐԴՍՈՒ՝

Իզաբել Ամարալ, փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր

S 345 Տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների մանկավարժահոգեբանական աջակցություն:
Ուսումնամեթոդական ձեռնարկ / Մ. Մարության,
Ս. Մուրադյան, Գ. Բալասանյան, Ա. Դիլանյան.,
Ս. Եղիազարյան, Հ. Չվակերյան.-Եր.: Ստողիկ, 2019.- 76 էջ:

Ուսումնամեթոդական ձեռնարկում ներկայացված են ներառական կրթական համակարգում աշխատող մասնագետների վերապատրաստման տեսագործական դասընթացի մոդուլային տրոհումը և տեսական հիմքերը: Տվյալ ձեռնարկը նախատեսված է հատուկ մանկավարժների, ուսուցիչների, դաստիարակների, հոգեբանների համար: Ձեռնարկից կարող են օգտվել նաև մանկավարժական բուհի ուսանողները, ինչպես նաև ծնողները:

ՀՏԴ 376(07)

ԳՄԴ 74.3g7

ISBN 978-9939-50-436-0

© Մարության Մ., Մուրադյան Ս., Բալասանյան Գ., Դիլանյան Ա., Եղիազարյան Ս., Չվակերյան Հ., 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

ՄՈՂՈՒԼ 1

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԶՄԱԿԻ
ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ,
ԱԶԱԿՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

ՄՈՂՈՒԼ 2

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ
ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՄՈՂՈՒԼ 3

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆ

ՄՈՂՈՒԼ 4

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ
ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

ՄՈՂՈՒԼ 5

ԱՇԽԱՏԱՆՔ ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԶՄԱԿԻ
ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԵՏ

ՄՈՂՈՒԼ 6

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ
ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը որդեգրել է համընդհանուր ներառականության քաղաքականությունը, որի հիմնական նպատակն է ստեղծել հավասար հնարավորություններ բոլոր երեխաների համար:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների համար նախատեսված «Տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների մանկավարժահոգեբանական աջակցություն» ուսումնամեթոդական ձեռնարկը կազմվել է մոդուլային ուսուցման հիմքով և բաղկացած է համապատասխանաբար 6 մոդուլից:

Սույն ձեռնարկի նպատակն է աջակցել հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների մասնագիտական զարգացման գործընթացին և բարձրացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության որակը:

Ներառական կրթության իրականացման գործընթացում շարունակաբար ընդլայնվում է ընդգրկված դպրոցների քանակը: Օրենսդրական և ուսումնամեթոդական դաշտերը պարբերաբար կատարելագործվում են և անհրաժեշտություն է առաջանում հանրակրթության ոլորտում դպրոցների մանկավարժական համակազմի պարտադիր վերապատրաստումներ իրականացնել: Այսօր Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև ամբողջ աշխարհի ներառական կրթություն իրականացնող դպրոցներում, հիմնարար տեղ են զբաղեցնում տեսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության հիմնախնդրի դրվածքը, խնդիրները և կազմակերպումը:

Տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների ներառման հիմնահարցը արդիական է և այն գիտական, գործնական ու տեսական հիմնավորում չի ստացել: Ուսուցիչների համար նախատեսված «Տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների մանկավարժահոգեբանական աջակցություն» ուսումնամեթոդական ձեռնարկում ներառված թեմաների ուսումնասիրումը կնպաստի ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը:

ՄՈՂՈՒ 1

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԱԶԱԿՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

1	Մոդուլի նպատակը	Տեղեկատվություն տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող սովորողների և նրանց առանձնահատկությունների մասին:
2	Տևողությունը	120 րոպե, որից 45 րոպե՝ գործնական, 75 րոպե՝ տեսական
3	Դասընթացի մասնակիցներին ներկայացվող պահանջները	Մոդուլն ուսումնասիրող մասնակիցները պետք է լինեն ներառական կրթություն իրականացնող դպրոցների ուսուցիչներ:
4	Վերապատրաստման արդյունք	<ol style="list-style-type: none"> 1. Մասնակիցները պատկերացում են կազմում տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող սովորողների մասին: 2. Ուսուցիչները պատկերացում են կազմում, թե տարբեր խանգարումների զուգակցումները ինչպես կարող են ազդել երեխաների ուսումնական ունակությունների վրա: 3. Ուսուցիչները պատկերացնում են, թե ինչպես կարող են հաղթահարել տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող սովորողների կրթության մարտահրավերները իրենց ամենօրյան աշխատանքնային գործունեության ընթացքում:
5	Զավորոշչային պահանջներ Բովանդակություն	Ներկայացվում է տեսողության և զարգացման զարգացման բազմակի խանգարումներ ունեցող սովորողների սահմանումը: Տրվում են գիտելիքներ տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող սովորողների առանձնահատկությունների մասին: Մասնակիցները կարողանում են

		<p>տարբերակել զարգացման բազմակի խանգարումներ ունեցող սովորողների առանձնահատկությունները.</p> <ul style="list-style-type: none"> • չտեսնող-չստղների • տեսողության և ֆիզիկական զարգացման, շարժողական ոլորտի • տեսողության և մտավոր զարգացման • տեսողության և հաղորդակցման: <p>Տրվում է գործնական առաջարկներ ուսումնական գործընթացում կարիքների հաղթահարման վերբերյալ:</p> <p>Մասնակիցները կարողանում են տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող սովորողների կրթական կարիքները տեղայնացնել իրենց կողմից դասավանդվող առարկայում:</p>
--	--	---

**«ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԶՄԱԿԻ
ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ,
ԱԶԱԿՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ»**

ՄՈՂՈՒԼԱՑԻՆ ԴԱՍԸՆԹԱՅԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

120 րո- պե	Բովանդակություն	Մեթոդ	Փակցվող կյութեր	Բաշխման կյութեր	Տևողու- թյուն
1	1.Կազմակերպչական մաս Դասընթացի նպատակի հաղորդում			Մլայդ 3	15 րոպե
	«Կարող եմ անել», «Չեմ կարող անել», «Կարծրատիպի փոխում» Հնարավորությ յունների բացահայ տում	Խաղ-վար ծություն 1			15 րոպե
2	Հարց. «Ինչպիսի՞ զար գացման բազմակի խանգարումներ գիտեք»: Տրվում է տեսո դության և զար գացման բազմակի խանգարում ունեցող երեխաների սահ մանումը: Ներկայացվում է տարբեր խանգա րումների զուգակցումները, որոնք կարող են ազդել երեխաների ուսումնական ունակությ յունների վրա	Ինտերկտիվ դասախոսությ- ուն		Մլայդ 4-5	15 րոպե
3	«Տեղեկատվության հաղորդում» զգա յարանների միջոցով	Խաղ-արժույթ-յ- ուն 2 /զույգերով/			15 րոպե

	ինֆորմացիայի հաղորդում				
	Զգայական անբավարարություն, Տեսողության խանգարումներ ունեցող երեխաներ, Ներկայացվում են տեսողության տարբեր խանգարումների դեպքում ուսումնական գործընթացի բարելավման մեխանիզմները	Ինտերակտիվ դասախոսություն		Մյադ 7-15	10 րոպե
	Նկարի վերլուծություն Քննարկում. Դիտարկել նկարը Ի՞նչ խնդիրների կարող է բախվել երեխան Ի՞նչ փոփոխություններ է անհրաժեշտ կատարել	Վարժություն 3 Խմբային աշխատանք			15 րոպե
4	Լսողության խանգարումներ ունեցող երեխաներ, ներկայացվում են լսողության տարբեր խանգարումների դեպքում ուսումնական գործընթացի բարելավման մեխանիզմները Չտեսնող-չլսող երեխաներ, ներկայացվում են ուսումնական գործընթացի բարելավման մեխանիզմները	Ինտերակտիվ դասախոսություն		Մյադ 15-24	10 րոպե
5	Տեսողության և զարգացման բազմակի	Դասախոսություն		Մյադ 25-28	5 րոպե

	խանգարումներ ունեցող երեխաների ֆիզիկական և շարժողական ոլորտի զարգացման, սահմանափակ հաղորդակցման հմտություններ, դրսևորման առանձնահատկությունները				
6	Տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների հոգեկան գործընթացների զարգացման առանձնահատկությունները և դրանց դսևորման ընթացքում աջակցման մեխանիզմները	Ինտերակտիվ դասախոսություն Տեսանյութի դիտում		Մլայդ 29-33	20 րոպե
7	Տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների ինքնասպասարկման հմտությունների ձևավորման առանձնահատկությունները	Ինտերակտիվ դասախոսություն Տեսանյութի դիտում		Մլայդ 34-36	8 րոպե
8	Հելլեն Քելլերի խոսքը			Մլայդ 37	2 րոպե

ԲԱՇԽՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԱԶԱԿՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների սահմանումը

Տարբեր աստիճանի դրսևորում ունեցող զուգակցված խանգարումներ են, որոնց դեպքում միշտ առկա է տեսողության խանգարում: Զարգացման բազմակի խանգարումները կարող են ունենալ տարբեր դրսևորումներ: Օրինակ՝ տեսողության և լսողության, տեսողության և խոսքի, տեսողության և մտավոր զարգացման խանգարման, տեսողության և շարժողական ֆունկցիաների զուգակցված խանգարումներ:

Որո՞նք են տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների առանձնահատկությունները

Տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաները ունեն ճանաչողական ոլորտի, հաղորդակցման, ֆիզիկական և շարժողական ոլորտի մի շարք առանձնահատկություններ: Ըստ ինտելեկտի զարգացվածության մակարդակի կարելի է առանձնացնել երեխաների հիմնական կատեգորիաներ՝

- պահպանված պոտենցիալ հնարավորություններ ունեցող երեխաներ,
- մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաներ,
- երեխաներ, ովքեր ունակ են կատարել ինքնուրույն ակտիվ գիտակցված գործողություն,
- երեխաներ, ովքեր ունեն մշտական խնամքի կարիք:

Տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների ընկալումը ունի որոշակի

առանձնահատկություններ՝ սովորում են ավելի դանդաղ: Նյութը յուրացնելու համար պահանջվում է ավելի շատ կրկնություններ:

Ձեռք բերած նոր հմտությունները դժվարությամբ են կիրառում գործնականում:

Տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաները ունեն ինքնարտահայտվելու և ուրիշներին հասկանալու դժվարություններ: Ումանք չեն կարողանում խոսել, կամ հասկացնել ժեստերով և հնարավոր է նաև չպատասխանեն, երբ հաղորդակցման փորձ կատարվի: Որոշ երեխաներ ունակ չեն կատարել նույնիսկ ամենահասարակ հրահանգները:

Քանի որ այս երեխաների մեծ մասը ունի շարժողական ոլորտի տարբեր խանգարումներ, նրանք դանդաղ են կատարում այնպիսի հասարակ առաջադրանքներ, ինչպես օրինակ շրջվելը, առարկա վերցնելը, գլուխը վեր պահելը:

Առկա են ստերիոտիպ շարժումներ (օրինակ ճոճվել ետ եւ առաջ), ինքնակառավարման ստիմուլյացիա (կրճատացնել ատամները, փոփոխել մարմնի դիրքը), ագրեսիվ վարք (հարվածել կամ կծել):

Ի՞նչ է զգայական անբավարարությունը

Տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաները տեսողության խանգարման հետ մեկտեղ ունեն զգայական ոլորտի մեկ այլ խանգարում: Նշենք, որ մենք ունենք հինգ զգայարան, որոնց միջոցով իրականանում է աշխարհընկալումը, ճանաչողական ոլորտի զարգացումը և այլն: Զգայական ոլորտի խանգարումներից ամենահաճախ հանդիպողներից է միաժամանակյա տեսողության և լսողության խանգարումը: Յուրաքանչյուր զգայական համակարգ ունի իրեն բնորոշ հատկանիշներ, որոնց խանգարումները կարող են առաջացնել մի շարք դժվարություններ ուսումնական գործընթացում: Ուսումնական գործընթացը ճիշտ կառուցելու համար անհրաժեշտ է իմանալ, թե ինչ դժվարություններ կարող են առաջանալ այդ երկու զգայարանների խանգարումների դեպքում և ինչպես հաղթահարել դրանք:

Ի՞նչ դժվարություններ են առաջանում տեսողության սրության իջեցման դեպքում

- Բարդություններ դետալները տեսնելիս
- Հեռավորությունը ընկալելու դժվարություններ
- Տեսողական հոգնածություն և այլն

Ի՞նչ միջոցներ ձեռնարկել այդ դժվարությունները հաղթահարելու համար

- Օգտագործել լինզաներ, շտկողական ապակիներ
- Մոտեցնել կամ հեռացնել առարկան
- Մեծացնել կոնտրաստը
- Կիրառել գունային ազդանշաններ
- Պարզեցնել տեսողական տարածքը
- Վերացնել կամ վերադիրքավորել առարկաները

Ի՞նչ դժվարություններ են առաջանում կենտրոնական տեսադաշտի խանգարման դեպքում

- Բարդություններ դետալները տեսնելիս
- Թերի կամ աղավաղված պատկերներ
- Տեսողական կոնտակտը պահելու դժվարություններ և այլն:

Ի՞նչ միջոցներ ձեռնարկել այդ դժվարությունները հաղթահարելու համար

- Մեծացնել կոնտրաստը
- Մեծացնել լուսավորությունը
- Կիրառել ուղղիչ ոսպնյակներ, ապակիներ
- Պարզեցնել տեսողական տարածքը

Ի՞նչ դժվարություններ են առաջանում ծայրամասային տեսադաշտի խանգարման դեպքում

- Տարածական ընկալման խանգարում
- Վատ է ադապտացվում լույսին / մթությանը
- Հոգնածություն և այլն

Ինչ միջոցներ ձեռնարկել այդ դժվարությունները հաղթահարելու համար

- Ջարգացնել տարածական կողմնորոշումը
- Տրամադրել լրացուցիչ ժամանակ / ընդմիջում
- Օգտագործել լրացուցիչ լուսավորություն
- Վերացնել կամ քչացնել լուսավորության կտրուկ փոփոխությունները
- Ժամանակ հատկացնել աչքերին հարմարվել նախքան գործողության անցնելը:

Ի՞նչ դժվարություններ են առաջանում լսողության խանգարումների դեպքում

1. **Լսողության թեթև խանգարման** դեպքում երեխաները դժվարանում են ընկալել բաղաձայնները նույնիսկ ամենամոտ տարածությունից (սկանջին մոտ), երեխան պետք է կրի համապատասխան լսողական սարք
2. **Լսողության միջին խանգարման** դեպքում դժվարանում է խոսքի այս կամ այն տարրի՝ մասնավորապես բաղաձայնների և բառերի վերջավորությունների ընկալումը. հատուկ միջոցառումների բացակայության դեպքում հաճախ այն հանգեցնում է խոսքի զարգացման խանգարման:
3. **Լսողության ծանր խանգարման** դեպքում խոսքի ընկալումը հնարավոր է նույնիսկ միայն 1 մետրից պակաս տարածությունից. խանգարվում է ոչ միայն արտաբերումը , այլև խոսքի ընդհանուր զարգացումը:

4. **Հստղության խորը խանգարման** դեպքում խոսքի ընկալումը հնարավոր է միայն մեծ ուժգնությամբ արտաբերվող ձայնի օգտագործմամբ, այն էլ մոտ տարածությունից. լիարժեք հնչյունային խոսքի զարգացումը դառնում է պրակտիկորեն անհնար:
5. **Հստղության լրիվ կորստի** դեպքում լրիվ բացակայում է խոսքը և առանց հատուկ ուսուցման երեխան չի կարող տիրապետել խոսքին: Խոսքի լրիվ բացակայությունը դժվարացնում է հաղորդակցումը շրջապատի հետ, խանգարվում է ճանաչողական գործունեության զարգացման ողջ ընթացքը:

Վարժություն 1

«Կարող եմ անել», «Չեմ կարող անել»,

Մասնակիցներին խնդրում ենք թղթի վրա գրել գործողություններ, որոնք նրանք կարողանում են և չեն կարողանում կատարել: Դրանք կարող են լինել և անձնական, և մասնագիտական:

Վարժություն 2

Մտազրոհ

«Զգայություններ»

Նպատակը

- Ազատ, անկաշկանդ մթնոլորտի ապահովում
- Բոլոր մասնակիցների արտահայտվելու հնարավորություն

Ընթացքը

Մասնակիցները պետք է թվարկեն, թե ինչ գիտեն զգայությունների, զգայարանների և դրանց դերի մասին: Ընդունված է համարել, որ մտագրոհի ընթացքում հնչած բոլոր մտքերն ընդունելի են:

Վարժություն 3

«Տեղեկատվության հաղորդում»

Նպատակը – հաղորդել ինֆորմացիան տարբեր ճանապարհներով:

Մեթոդական նյութ – աչքի կապիչներ, տպված բառեր

Ընթացքը – մասնակիցներին բաժանել զույգերի, յուրաքանչյուր զույգից մեկը հանդես է գալիս չտեսնողի դերում, մյուսը՝ չլսողի: Բաժանել աչքի կապիչները և բառերը /գոյականներ/: Յուրաքանչյուր մասնակից չպետք է ցույց տա իր բառը մյուսին: Տրվում է հրահանգ բացատրել բառերի իմաստը՝ առանց խոսքի: Չտեսնողը կապում է կապիչը և բացատրում բառը: Այնուհետև չլսողն է բացատրում բառի իմաստը չտեսնողին:

Գործողությանը տրվում է հինգ րոպե ժամանակ: Ավարտից հետո մասնակիցները կիսվում են իրենց տպավորություններով:

Վարժություն 4

Խմբային աշխատանք

«Նկարի վերլուծություն»

Մասնակիցներին բաժանել երեք խմբի, յուրաքանչյուր խմբին հանձնարարել նայել դասասենյակի նկարը և պատասխանել հետևյալ հարցերին.

- Ի՞նչ խնդիրների հետ կարող է բախվել երեխան ներկայացված լսարանում
- Ի՞նչ փոփոխություններ է անհրաժեշտ կատարել ներկայացված լսարանում

Քննարկելուց հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր դիտարկումները:

ՄՈՂՈՒԼ 2

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՄԱՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1	Մոդուլի նպատակը	Ուսուցիչներին տալ գիտելիք և ռեսուրսներ ներառական դպրոցներում տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող սովորողների կարիքների գնահատման համար:
2	Տևողությունը	120 րոպե, որից 55 րոպեն՝ գործնական, 65 րոպեն՝ տեսական
3	Դասընթացի մասնակիցներին ներկայացվող պահանջները	Մոդուլն ուսումնասիրող մասնակիցները պետք է լինեն ներառական կրթություն իրականացնող դպրոցների ուսուցիչներ:
5	Վերապատրաստման արդյունք	<ol style="list-style-type: none"> 1. Մասնակիցները պատկերացում են կազմում կրթական կարիքի գնահատման մասին 2. Ուսուցիչները պատկերացում են կազմում, թե ինչ պետք է գնահատեն /երեխա, գործունեություն, միջավայր/ և ով պետք է գնահատի 3. Մասնակիցները պատկերացում են կազմում գնահատման տեսակների մասին
6	Զավորոշյալին պահանջներ Բովանդակություն	<p>Ներկայացվում է գնահատման սահմանումը:</p> <p>Տրվում է տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող սովորողների կարիքի գնահատման նպատակները</p> <p>Տրվում է գիտելիքներ երեխայի, գործունեության, միջավայրի գնահատման առանձնահատկությունների մասին:</p> <p>Ներկայացվում է գնահատման աղյուսքների հավաքագրման անհրաժեշտությունը, նպատակը</p> <p>Նկարագրվում է ֆորմալ, ոչ ֆորմալ գնահատումը, դինամիկ, ստատիկ գնահատումը</p>

**«ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԶՄԱԿԻ
ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒՄԱՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ»**

ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՅԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

120 Ըն- պե	Բովանդակություն	Մեթոդ	Փակց վող նյութեր	Բաշխ-ման նյութեր	Տևո- րու- թյուն
1	Դասընթացի նպատակի հաղորդում Դասընթացի ընթացքում քննարկվող թեմաների ներկայացում	Դասախոսություն		Սլայդ 2-3	10 րոպե
2	Հարց. «Ինչ է գնահատումը»: Պատասխանները շարադրվում են պատասխանի վրա:	Վարժություն 1	Պատաս- առ 1		10 րոպե
	Տրվում է գնահատման սահմանումը	Ինտերակտիվ դասախոսություն		Սլայդ 4	5 րոպե
3	Տեսանյութի դիտում Բացահայտել ինչ աջակցության կարիք ունի երեխան	Խմբային աշխատանք			15 րոպե
4	Ինչ ենք գնահատում /երեխա, միջավայր, գործունեություն/	Ինտերակտիվ դասախոսություն		Սլայդ 5-6	5 րոպե

	<p>Երեխայի գնահատում</p> <ul style="list-style-type: none"> • Հաղորդակցում • Արձագանքում է ազդակներին /լտողություն, տեսողություն, շոշափելիք • Սեփական փորձի ինտեգրման կարողություն • Սոցիալական փոխհարաբերություն և այլն 				
	<p>Գործունեության գնահատում</p> <ul style="list-style-type: none"> • Իրականացման վայրը • Քայլերը <p>Անհրաժեշտ հարմարեցումները և այլն</p> <p>Միջավայրի գնահատում</p> <ul style="list-style-type: none"> • Տուն • Դպրոց • Համայնք 	Դասախոսություն		Սլայդ 7-8	5 թույլե
5	<p>Տեսանյութի դիտում և Լրացվում է գնահատման արձանագրությունը</p>	Խմբային աշխատանք			10 թույլե
6	<p>Ով պետք է գնահատի երեխային Պատասխանները</p>	Վարժություն 2		Պատասա 2	10 թույլե

	շարադրվում են պատասխանի վրա				
7	Գնահատման փուլերը և դրանց նպատակները <ul style="list-style-type: none"> • Սկզբնական գնահատում • Ընթացիկ գնահատում • Գնահատում ըստ անհրաժեշտության • Վերագնահատում 	Ինտերակտիվ դասախոսություն		Սլայդ 9-10	5 ըոպե
8	Տվյալների հավաքագրում	Ինտերակտիվ դասախոսություն		Սլայդ 11-13	15 ըոպե
9	Գնահատման տեսակները. Ֆորմալ Ոչ ֆորմալ Գնահատման մեթոդները	Ինտերակտիվ դասախոսություն		Սլայդ 14-18	20 ըոպե
10	Դեպքի քննարկում /case-study/	Խմբային աշխատանք			10 ըոպե

ԲԱՇԽՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՄԱՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գնահատումը գործընթաց է՝ երեխայի գիտելիքների, կարողությունների, հետաքրքրությունների, վարքի վերաբերյալ տեղեկատվությունը

- դիտարկելու
- հավաքագրելու
- վերլուծելու
- մեկնաբանելու
- կիրառելու:

Գնահատման հիմնական նպատակները

- Բացահայտել, թե ի՞նչ աջակցության կարիք ունի երեխան
- Հավաքագրել տվյալներ
- Պլանավորել հետագա աշխատանքային ռազմավարությունը
- Գնահատել երեխայի առաջընթացը
- Գնահատել ծրագրի արդյունավետությունը

Ի՞նչ ենք մենք գնահատում

- Երեխային
- Գործողությունը
- Միջավայրը

Գնահատում ենք երեխայի

- Հաղորդակցման ունակությունները
- Զգայական ոլորտը. պատասխանում է ստիմուլներին՝ լսողություն, տեսողություն, հպում

- Ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների առօրյայում կիրառելու ունակությունը
- Սոցիալական փոխազդեցություն
- Խնդիրների լուծում
- Մարմնի դիրքը

Գնահատում ենք գործողությունը

- Գործողության վայրը
- Գործընկերների ներգրավվածությունը գործողության մեջ
- Գործողության կարգը
- Երեխայի մասնակցության մակարդակը
- Անհրաժեշտ հարմարեցումները
- Մեծահասակի կողմից օգտագործվող ռազմավարությունները

Գնահատում ենք միջավայրը

Տուն. գործողություններ, որոնք կատարվում են տանը, ընտանիքի հետ

Դպրոց. գործողություններ, որոնք կատարվում են դպրոցում՝ ուսուցիչների և ընկերների հետ

Համայնք. գործողություններ, որոնք կատարվում տան և դպրոցի շրջակա միջավայրում

Անհրաժեշտ է տվյալներ հավաքագրել երեխայի մասին

- Զգայական և շարժողական հմտություններ
- Ճանաչողական ոլորտի զարգացում
- Հաղորդակցում
- Սոցիալական փոխազդեցություն
- Մշակութային պատկանելություն
- Նախասփրություններ և հետաքրքրություններ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Տորմալ գնահատում

- Հիմնված է ստանդարտ թեստերի արդյունքների վրա
- Տվյալները հավաքագրվում են ըստ աշակերտների առաջադիմության
- Երեխան գնահատվում է ստանդարտ միավորներով

Ոչ ֆորմալ գնահատում

- Դիտարկում
- Կարելի է կիրառել ցանկացած պահի
- Երեխաները տեղեկացված չեն գնահատման ընթացքի մասին
- Համեմատել երեխայի ձեռքբերումները ժամանակի ընթացքում

Դինամիկ և ստատիկ գնահատման համեմատություն

Ստատիկ	Դինամիկ
Երեխան պասիվ է	Երեխան ակտիվ է
Գնահատողը դիտող է	Գնահատողը մասնակից է
Առանձնացնում է խնդիրները	Որոշում է կատարել հնարավոր փոփոխություններ

Ո՞վ պետք է գնահատի

- Հիմնական ուսուցիչը
- Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող խումբը
- Ընտանիքը

Վարժություն 1

Մտագրոհ

«Ի՞նչ է գնահատումը»

Մասնակիցները պետք է նշեն մեկ բառով, թե ինչ են հասկանում գնահատում ասելով՝ առանց մեկնաբանության: Արտահայտած բոլոր մտքերը գրանցվում են պաստառի վրա: Այս հնարի միջոցով բոլոր մասնակիցները հնարավորություն են ստանում արտահայտվել:

Վարժություն 2

Տեսանյութի դիտում

Մասնակիցները բաժանվում են երեք խմբի: Դիտում են տեսանյութը և գնահատման արձանագրության թերթիկի մեջ գրանցում դիտարկման արդյունքները:

Վերջում յուրաքանչյուր թիմից մեկը ներկայացնում է կատարված աշխատանքը:

ՄՈԴՈՒԼ 3

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆ

1	Մոդուլի նպատակը	Ներկայացնել անհատական ուսուցման պլանի կառուցվածքը, լրացման առանձնահատկությունները, մոտեցման հիմնական սկզբունքները
2	Տևողությունը	120 րոպե, որից 75 րոպեն՝ գործնական, 45 րոպեն՝ տեսական
3	Դասընթացի մասնակիցներին ներկայացվող պահանջները	Մոդուլն ուսումնասիրող մասնակիցները պետք է լինեն ներառական կրթություն իրականացնող դպրոցների ուսուցիչներ:
4	Վերապատրաստման արդյունք	<ol style="list-style-type: none"> 1. Մասնակիցները պատկերացում են կազմում, թե ինչ է անհատական ուսուցման պլանը, դրա նպատակը 2. Ուսուցիչները պատկերացում են կազմում, ԱՌՊ-ի ձախողման դեպքերի մասին, հստակ պատկերացում են կազմում ԱՌՊ-ի լրացման կարգի մասին 3. Մասնակիցները պատկերացում են կազմում ԱՌՊ-ը լրացնող պատասխանատուների մասին:
5	Չափորոշչային պահանջներ Բովանդակություն	<p>Ներկայացվում է անհատական ուսուցման պլանի սահմանումը:</p> <p>Տրվում են անհատական ուսուցման պլանի նպատակները</p> <p>Տրվում է տեղեկություն, թե երբ կարող է ԱՌՊ-ը չծառայել իր նպատակին, որ դեպքերում այն կարող է օգուտ չտալ :</p> <p>Ներկայացվում է նպատակների ճիշտ սահմանման կարևորությունը, տրվում են օրինակներ:</p> <p>Նկարագրվում է մանկավարժահոգեբանական աջակցման խմբի մասնագետների, առարկայական ուսուցիչների, ծնողի դերը:</p>

«ԱՆՀԱՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆ »

ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՅԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

120 Ըն պե	Բովանդակություն	Մեթոդ	Փակցվող նյութեր	Բաշխման նյութեր	Տևողու թյուն
1	Ինչ է ԱՌԻՊ-ը ԱՌԻՊ-ի սահմանումը՝ համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի ԱՌԻՊ-ի կառուցվածքը	Վարժութ- յուն 1 Ակտիվացնող վարժություն Ներկայացում, մեկնաբա նություն		Մլայդ 1 Բաշխման նյութ	25 րոպե
2	Ովքեր են ԱՌԻՊ-ի պատասխանա- տուները և մասնակիցները, մանկավարժահոգե- բանական աջակցու- թյան խմբի մասնագետները	Մեկնաբանութ- յուն, քննարկում, պայդների ցուցադրում Վարժություն 2 Իմբային աշխատանք	Պաստառ 1	Մլայդ 2-8	25 րոպե
3	Ծնողի դերը ԱՌԻՊ-ի լրացման գործընթացում	Կարճ դասախոսութ- յուն		Մլայդ 9-11	10 րոպե
4	ԱՌԻՊ. Կարճաժամկե- տ նպատակ և վերջնանպատակների սահմանում՝	Ինտերակտիվ դասախոսութ- յուն		Մլայդ 13-17	20 րոպե

	հիմնվելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յու- րաքանչյուր սովորողի ուժեղ կողմերի վրա				
5	ԱՌԻ-ի նպատակները	Համառոտ ներկայացում		Սլայդ 18-20	20 րոպե
6	ԱՌԻ-ի լրացման կարգը ԱՌԻ-ը լրացնելու դժվարությունները	Վարժություն 3 Խմբային աշխատանք			15 րոպե
7	ԱՌԻ-ի լրացման օրինակ	Համառոտ ներկայացում		Սլայդ 21-23	5 րոպե

ԲԱՇԽՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆ

Մենք հավատում ենք, որ յուրաքանչյուր
Երեխա ունակ է սովորելու ...
Յուրաքանչյուր երեխա անկրկնելի է և
սովորում է տարբեր ձևերով:

Անհատական ուսուցման պլան (ԱՌԻՊ)

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է անհատական ուսուցման պլանը որպես «հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրային և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (ներառյալ աջակցող ծառայությունները)»:

- ԱՌԻՊ-ը պետական փաստաթուղթ է և միջոց՝ հատուկ և հանրակրթական հաստատություններում սովորող՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար
- ԱՌԻՊ-ը գրավոր փաստաթուղթ է հարմարեցված երեխայի անհատական կրթական կարիքներին:
- ԱՌԻՊ-ը իրատեսական նպատակների և խնդիրների ամբողջականություն է, որոնց պետք է հասնել ուսումնական տարվա ընթացքում:
- ԱՌԻՊ-ը ապահովում է ուսուցիչներին սովորողի մասին համակարգված և տեղեկություններ:

- ԱՌԻՊ-ը գործիք է, որն օգնում է ուսուցիչներին պարբերաբար վերահսկելու սովորողի առաջընթացը ժամանակի ընթացքում:
- ԱՌԻՊ-ը օրենքով պարտադրված փաստաթուղթ է, որին դպրոցները պարտավոր են հետևել:
- ԱՌԻՊ-ը հաղորդակցման գործիք է դպրոցի մասնագետների և ծնողների համար:
- ԱՌԻՊ-ը պարբերաբար վերանայվում է՝ ֆիքսելով ցանկացած փոփոխությունները սովորողի կրթական ծրագրում՝ ելնելով սովորողի ընթացիկ և տարեկան հաջողությունների գնահատումից:
- Յուրաքանչյուր երեխա, ով ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, պետք է ունենա ԱՌԻՊ:

ԱՌԻՊ-ի հիմնական նպատակն է՝ համակարգել համապատասխան տեղեկատվությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի համար:

- Մշտապես աջակցել սովորողի անհատական ուսուցման գործընթացին:
- Արտահայտել սովորողի կրթական առաջընթացն ու զարգացումը:
- Ձևավորել չափելի նպատակներ սովորողի համար:

ԱՌԻՊ-ում սահմանված նպատակները պետք է լինեն իրատեսական, չափելի: Որքան իրատեսական են սահմանված նպատակները, այնքան դրանց հաղթահարումը հեշտ է և հասանելի: Դրանք պետք է հիմնված լինեն հանրակրթության

պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վրա:

ԱՌԻՊ-ը չի կարող

- հանդիսանալ սովորողի առօրյա դասի պլանը և ներկայացնել ուսումնական գործընթացի յուրաքանչյուր մանրամասնություն
- լինել ուսուցչակենտրոն
- լինել ունիվերսալ
- լինել նախօրոք որոշված ծրագիր

Ովքե՞ր ունեն ԱՌԻՊ-ի կարիք

Սովորողները, ովքեր գնահատվել են որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող թիմի անդամների դերն ու պարտականությունները սովորողի ԱՌԻՊ-ի մշակման և իրականացման գործընթացում

ԱՌԻՊ-ի մշակման և իրականացման գործընթացը հիմնված է համագործակցության և թիմային աշխատանքի սկզբունքների վրա, որտեղ յուրաքանչյուրը պետք է հստակ պատկերացնի իր դերն ու պարտականությունն այդ գործընթացում:

Դպրոցի տնօրեն – Սովորողի ԱՌԻՊ-ի կազմման համար առաջնային պատասխանատվությունը կրում է դպրոցի տնօրենը:

Դպրոցի տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ – Տնօրենի հետ միասին առաջնային պատասխանատվություն է կրում սովորողի ԱՌԻՊ-ի գործնական կիրառման գործընթացում է հանդիսանալով այդ բոլոր աշխատանքների և ԱՌԻՊ-ում ներգրավված բոլոր կողմերի միջև արդյունավետ և թիմային համագործակցության գլխավոր համակարգողը:

Ուսուցիչ – Սովորողի ԱՌԻՊ-ով պլանավորված տվյալ առարկայական ծրագրի հարմարեցման, իրականացման և արդյունքների գնահատման համար առաջնային պատասխանատվություն է կրում ուսուցիչը:

Մանկավարժահոգեբանական աջակցության խմբի հատուկ մանկավարժ, հոգեբան, սոցիալական աշխատող– Մանկավարժահոգեբանական աջակցության խումբը աշխատում է ցանկացած սովորողի հետ, ով ունի այս կամ այն ֆունկցիայի որևէ աստիճանի խանգարում, որը դժվարացնում, որոշ դեպքերում անհնարին է դարձնում սովորողի կողմից ԱՌԻՊ-ով սահմանված տարեկան վերջնարդյունքներին և նպատակադրումներին հասնելը՝ առանց լրացուցիչ հատուկ մանկավարժական, հոգեբանական և սոցիալականացմանը միտված աջակցության տրամադրման:

Ուսուցչի օգնական – Ուսուցչի օգնականը, ԱՌԻՊ-ի մշակման և իրականացման ողջ ընթացքում, կապող օղակ է հանդիսանում տվյալ սովորողի առարկայական ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամների, ծնողի և տվյալ սովորողի միջև՝ փոխանակելով նրանց հետ ցանկացած տեղեկատվություն՝ կապված երեխայի ուսումնական առաջընթացի և դեռևս առկա խնդիրների հետ:

Սովորողի ծնողը – Ծնողը ԱՌԻՊ-ի համագործակցային թիմի անդամ է: Նրա ներգրավվածությունը պետք է սկսվի իր երեխայի համար իրատեսական և նպատակահարմար անհատականացված ծրագրի վերաբերյալ որոշումների կայացման փուլից և շարունակվի ԱՌԻՊ-ի մշակման և դրա իրականացման փուլերում:

Սովորողը – Սովորողը կազմում է ԱՌԻՊ-ի առանցքը ողջ գործընթացի բոլոր փուլերի կենտոնը, ուստի նրա հնարավոր մասնակցությունը ԱՌԻՊ-ի մշակման գործընթացներին շատ

օգտակար կլինի արդյունավետ և իրատեսական փաստաթուղթ
ունենալու համար:

ԱՌԻՊ-ի կառուցվածքը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆ՝ ԱՌԻՊ

1. ՍՈՎՈՐՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ
2. ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
3. ԵՐԵԽԱՅԻ ՎԵՐՋԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ, ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ (ՆՇԵԼ ԱՅՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՏՎՅԱԼ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՒՄ ԵՆ ՍՈՎՈՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ)
5. ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ, ՈՒՐ ԴՐՄԵՎՈՐՎՈՒՄ ԵՆ ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԿԱՐԻՔՆԵՐԸ
6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ, ՈՐՈՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԱՌԻՊ
7. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՐՄԱՐԵՅՈՒՄՆԵՐ
8. ԱՌԻՊ-Ի ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՑԱՆԿ
9. ՍՈՎՈՐՈՂԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
10. ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
11. ՍՈՎՈՐՈՂԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ
12. ԽՆԴԻՐՆԵՐ՝ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՆՊԱՏԱԿԱԴՐՈՒՄՆԵՐ

13. ԱՌԻՊ-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ (ԸՆԹԱՑԻԿ, ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ, ՏԱՐԵԿԱՆ)
14. ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ՊԼԱՆՆԵՐ (ՀԱԶՈՐԴ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ԿԱՍ ՏԱՐՐԱԿԱՆԻՑ՝ ՄԻԶԻՆ ԴՊՐՈՑ ԵՎ ՄԻԶԻՆ ԴՊՐՈՑԻՑ՝ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ)

ԱՌԻՊ-ը մշակվում է մեկ ուսումնական տարվա համար: Սովորողի տարեկան վերջնարդյունքները և կարճաժամկետ ուսումնառության նպատակադրումները ուսումնական տարվա ընթացքում ցանկացած ժամանակ կարող են անհրաժեշտ փոփոխությունների ենթարկվել: Դրանք կարող են ուսուցչի կողմից վերանայվել: Արդյունավետ են այն ԱՌԻՊ-ները, որոնք խթանում են սովորողի ուսումնառությունը:

Վարժություն 1

Ակտիվացնող վարժություն

«Ի՞նչ է անհատական ուսուցման պլանը»

Մասնակիցները պետք է նշեն, թե ինչ են հասկանում անհատական ուսուցման պլան ասելով: Արտահայտած բոլոր մտքերը գրանցվում է պաստառի վրա: Այս հնարի միջոցով բոլոր մասնակիցները հնարավորություն են ստանում արտահայտվել:

Վարժություն 2

Պաստառ 1

« Ովքե՞ր են կազմում ԱՌԻՊ-ը»

Մասնակիցները պետք է հայտնեն իրենց կարծիքը, թե որ մասնագետներն են կազմում ԱՌԻՊ-ը, ովքեր են ըզգրկված այդ գործընթացում: Պատասխանները գրել պաստառի վրա:

Վարժություն 3

Խմբային աշխատանք

Մասնակիցները բաժանվում են խմբերի: Դիտում տեսանյութ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի մասին, որում նկարագրվում է երեխան /տվյալներ/, ցույց է տրվում երեխային որևէ գործունեություն կատարելիս: Խմբերը պետք է ներկայացնեն տվյալ երեխայի ուժեղ կողմերը, առկա մակարդակը, կարճաժամկետ և տարեկան նպատակը: Քննարկելուց հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր վերլուծությունը:

ՄՈՂՈՒ 4

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

1	Մոդուլի նպատակը	Ուսուցիչներին տրամադրել համապատասխան գիտելիքներ՝ տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների հաղորդակցման առանձնահատկությունների վերաբերյալ
2	Տևողությունը	120 րոպե, որից 65 րոպեն՝ գործնական, 55 րոպեն՝ տեսական
3	Դասընթացի մասնակիցներին ներկայացվող պահանջները	Մոդուլն ուսումնասիրող մասնակիցները պետք է լինեն ներառական կրթություն իրականացնող դպրոցների ուսուցիչներ:
5	Վերապատրաստման արդյունք	<ol style="list-style-type: none"> 1. Մասնակիցները պատկերացում են կազմում տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող սովորողների հաղորդակցման առանձնահատկությունների վերաբերյալ 2. Ուսուցիչները կարող են ընտրել տարբեր մոտեցումներ և մեթոդներ՝ բարելավելու տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների հաղորդակցումը 3. Տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող սովորողների հաղորդակցման առանձնահատկությունների բացահայտման արդյունքում ստացված մասնագիտական մանկավարժահոգեբանական տեղեկատվությունը ուսուցիչները կկարողանան օգտագործել ի շահ երեխաների:

6	<p>Չավորոշչային պահանջներ</p> <p>Բովանդակություն</p>	<p>Ներկայացվում է տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող սովորողների հաղորդակցման սահմանումը:</p> <p>Տրվում է գիտելիքներ տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների հաղորդակցման առանձնա հատկությունների մասին:</p> <p>Մասնակիցներին տեղեկատվություն է տրվում, տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների հետ հաղորդակցման համար կիրառվող տարբեր միջոցների վերաբերյալ:</p>
---	--	--

**«ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԶՄԱԿԻ
ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ»**

ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

120 րո պե	Բովանդակություն	Մեթոդ	Փակցվող նյութեր	Բաշխման նյութեր	Տևողություն
	Կազմակերպչական մաս «Չտեսնող-չլսող անձանց հաղորդակցում Դասընթացի նպատակի հաղորդում	Դասախոսություն		Մլայդ 1-7 Բաշխման նյութ	15 րոպե
1	«Ի՞նչ է հաղորդակցումը» Ինչ գիտեք տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների հաղորդակցման վերաբերյալ, Հաղորդակցման այլընտրանքային ձևերի վերաբերյալ Պատասխանները շարադրվում է	Վարժություն 1 Մտազրոհ	Պատասխան 1		15 րոպե

<p>պաստառի վրա Տրվում է հաղորդակցման սահմանումը Հաղորդակցման տեսակները</p>				
<p>Հաղորդակցման այլընտրանքային ձևեր Հաղորդակցում, լեզու, գործառույթները Որտեղից և ինչից սկսել սկսել տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների հաղորդակցումը</p>	<p>Վարժություն 2 Գարճ շարադրանք</p>		<p>Մլայդ 8-15</p>	<p>15 րոպե</p>
<p>Չտեսնող-չլսող երեխաների հաղորդակցում</p>	<p>Ակտիվացնող վարժություն 3</p>			<p>15 րոպե</p>
<p>Հաղորդակցման ձևերը. Ներքին հաղորդակցում, Արտաքին հաղորդակցում, Ինչ պետք է հաշվի առնել հաղորդակցման ձև ընտրելիս</p>	<p>Ինտերակտիվ Դասախոսույթ -յուն</p>		<p>Մլայդ 16-22</p>	<p>20 րոպե</p>

2	Միավույններ, Բարելավել երեխայի հաղորդակցման գործառնությունները, Հաղորդակցման պատճառները, Հաղորդակցման միջոցները, Հաղորդակցման տարրերը	Դասախոսությո՜ւն		Մլայդ 23-28	10 րոպե
	Ինչպես դարձնել հաղորդակցումն առավել արդյունավետ, Սահմանափակ հաղորդակցման օրինակներ	Ինտերակտիվ դասախոսությո՜ւն		Մլայդ 29-36	10 րոպե
3	Եկեք հիշենք և վիզուալիզացնենք հաղորդակցման լավագույն փորձը, որ երբևէ ունեցել ենք, ինչ տարրեր էր այն ներառում	Վարժություն 4	Պաստառ 2		10 րոպե
4	Տեսանյութի վերլուծություն	Վարժություն 5 Խմբային աշխատանք			10 րոպե

ԲԱՇԽՄԱՆ ՆՑՈՒԹԵՐ

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՖԱՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

Հաղորդակցման սահմանումը

Հաղորդակցումը երկու և ավելի մարդկանց միջև տեղեկատվության փոխանակումն է՝ փոխազդելով միմյանց վրա: Այն միջոց է, որով մենք կիսում ենք մեր զգացմունքները, գիտելիքները, կարիքները:

Հաղորդակցման տեսակները

Խոսքային հաղորդակցման ժամանակ որպես նշանային համակարգ և տեղեկատվության կողավորման միջոց օգտագործվում է խոսքը:

Ոչ խոսքային հաղորդակցումն իր մեջ ներառում է մի քանի տարատեսակ. կինեստետիկ, պարալինգվիստիկ և էքստրալինգվիստիկ, կոմունիկատիվ գործընթացի ժամանակատարածային կազմակերպում, տեսողական կոնտակտ:

- Վերբալ հաղորդակցումն իրականանում է բառերի միջոցով,
- Հաղորդակցման վերբալ միջոցը խոսքն է,
- Մենք հաղորդակցվում ենք գրավոր և բանավոր խոսքի շնորհիվ,
- Գրավոր և բանավոր խոսքը արտահայտվում է լեզվի միջոցով:

Հաղորդակցման հիմնական քայլերն են.

1. Հղորդակցման պատճառի կամ մոտիվացիայի ձևավորում,
2. Հաղորդագրության ձևակերպում (հետագա ներքին կամ տեխնիկական ձևակերպման գործընթաց՝ այն ինչ պետք է հստակ արտահայտել),
3. Հաղորդագրության կողավորում (օրինակ՝ գրավոր տեքստ, նկարներ, ժեստեր և այլն),

Խոսքային հաղորդակցումը ուղեկցվում է ոչ խոսքային հաղորդակցմամբ:

Ոչ խոսքային հաղորդակցման ժամանակ հաղորդակցման գործիք է դառնում մարդու մարմինը և տեղեկատվության 60-70%-ը հաղորդակցման ընթացքում մարդիկ փոխանցում են «մարմնի լեզվի» շնորհիվ:

Լեզուն նշանային և արատրակտ համակարգ է, որն օգտագործվում է տեղեկատվություն փոխանցելու համար

Հաղորդակցում

Արտաքին հաղորդակցում.

- Հասկանալ ուրիշի ուղարկած հաղորդագրության մտադրությունը:

Ներքին հաղորդակցում.

- Կարող են արտահայտել ցանկություններ, կարիքներ կամ այլ մտքեր արտահայտել ուրիշներին:

Լեզու

Ներքին լեզուն.

- Հասկանալ կոնկրետ բառեր, նշաններ կամ ժեստեր:

Արտաքին լեզու.

- Կարող են օգտագործել առօրյա բառեր, նշաններ կամ ժեստեր, արտահայտել ցանկություններ, կարիքներ կամ այլ մտադրություններ:

Տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների հաղորդակցումը ո ըստեղից և ի նչից սկսել

- Որոշել երեխայի հաղորդակցման դրդապատճառները:
- Ներառել հաղորդակցման հմտությունները օրվա ընթացքում՝ դպրոցում, տանը և համայնքում գործողությունների մեջ:

Որո նք են տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների ներքին հաղորդակցման ձևերը.

- Զգայական ազդանշաններ
- Ժեստեր
- Չայնարկություն

- Շոշափելի սիմվոլներ
- Նկարներ
- Ժեստերի լեզու
- Խոսք
- Գրի գործընթաց /Բրաիլյան համակարգ/

Որո՞նք են տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների արտաքին հաղորդակցման ձևերը.

- Մարմնի շարժումներ
- Վարք
- Առարկաների սիմվոլներ
- Ժեստեր
- Չայնարկություն
- Նկարներ
- Ժեստերի լեզու
- Խոսք

Ի՞նչ պետք է հաշվի առնել հաղորդակցման ձև ընտրելիս.

- Տեսողություն
- Լսողություն
- Շարժվելու ունակություն
- Ճանաչողություն
- Վարք
- Հաղորդակցման հմտություններ
- Բարձր զգայունակություն

Ի՞նչպես բարելավել երեխայի հաղորդակցման ֆունկցիաները.

Պայմաններ ստեղծել, որպեսզի երեխան հաղորդակցվի ցանկացած իրավիճակում:

Ի՞նչ տարրերից է կազմված հաղորդակցման մոդելը.

- ուղարկող
- ստացող
- հաղորդագրություն
- ուղի, միջոց
- հետադարձ կապ

Ո՞րոնք են հաղորդակցման գործառույթները.

- կոմունիկատիվ-տեղեկատվական
- կոմունիկատիվ-կարգավորիչ
- կոմունիկատիվ-աֆեկտիվ

